ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 փետրվարի 2025 թվականի N 182 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-Ի N 642-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի մայիսի 30-ի «Բնակչության սոցիալական կամ հատուկ խմբերի և այն հիվանդությունների ցանկերը, որոնց դեպքում դեղերը շահառուներին հատկացվում են դրանց արժեքի լրիվ կամ մասնակի փոխհատուցմամբ, ինչպես նաև այդ բնակչության սոցիալական կամ հատուկ խմբերի ցանկում ընդգրկված շահառուներին Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկական կազմակերպությունների միջոցով դեղերի հատկացման և փոխհատուցման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N 1717-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 642-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

2) որոշման N 1 հավելվածի 1–ին կետի 11–րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«11) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության կողմից Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչված և ապաստան ստացած, այդ թվում՝ ժամանակավոր պաշտպանություն ստացած անձինք, ինչպես նաև միգրացիայի և քաղաքացիության ծառայության կողմից հավաքագրված և մշակված (բնակչության պետական ռեգիստրի տվյալների հետ նույնականացված)՝ 2023 թվականի սեպտեմբերի 19-ից Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի դեմ սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով բռնի տեղահանված անձինք.».

3) որոշման N 3 հավելվածի 2–րդ կետը «օրենսդրության համաձայն» բառերից հետո լրացնել «՝ բացառությամբ սույն որոշման N 4 հավելվածով փորձարարական մեխանիզմով փոխհատուցվող դեղերի» բառերով.

4) որոշման 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4-րդ ենթակետով.

«4) պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով սիրտ-անոթային հիվանդությունների և շաքարային դիաբետով հիվանդներին տրամադրվող դեղերի փոխհատուցման փորձարարական մեխանիզմը՝ համաձայն N 4 հավելվածի:».

5) որոշումը լրացնել նոր՝ N 4 հավելվածով՝ համաձայն հավելվածի:

2. Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով սիրտ-անոթային հիվանդությունների և շաքարային դիաբետով հիվանդներին տրամադրվող դեղերի փոխհատուցման փորձարարական մեխանիզմն իրականացնել՝ սկսած 2025 թվականի ապրիլի 1-ից՝ փորձարարական եղանակով, մինչև 2025 թվականի նոյեմբերի 30-ը:

3. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարին՝

1) մինչև 2025 թվականի ապրիլի 1–ը ապահովել փորձարարական մեխանիզմով փոխհատուցվող դեղերի ցանկի հրապարակումը՝ ըստ սույն որոշման հավելվածով սահմանված մեթոդաբանությամբ հաշվարկված փոխհատուցման գնի, փոխհատուցման առավելագույն չափի, շահառուի կողմից վճարման ենթակա համավճարի չափի.

2) սույն որոշման 2-րդ կետում նշված ժամկետի ավարտից մեկ ամիս առաջ Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ ներկայացնել առաջարկություններ փորձարարական մեխանիզմի հետագա կիրարկման անհրաժեշտության վերաբերյալ:

4. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահին՝

1) սույն որոշման հավելվածի 20-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված համադրումն իրականացնելու նպատակով ապահովել սույն որոշման կիրարկման ընթացքում դեղատների կողմից դուրս գրված բոլոր այն ՀԴՄ կտրոնների տվյալների անընդմեջ փոխանցումն էլեկտրոնային առողջապահական համակարգին, որտեղ որպես վճարման տեսակ կիրառված է «փոխհատուցման գումար» տեսակը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

20.02.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ